

Քայմիկի թղթակիցը մեծ գովեստի կը խօսի միսիօնարաց գործին վրա՝ ժողովրդասիրան կրթութեան ընդարձակման և դաստիարակութեան ծաւալման տեսակէտով, և կը խօսի թէ և Միսիօնարք այս երկրին մէջ քաղաքական խնդրոց բնաւ չեն խառնուիր, այսու ամենայնիւ իրենց գործը քաղաքական կարեւորութիւն ալ ունի, սա նկատմամբ թէ բնիկ ժողովուրդը կրթելով և յորգործելով իւր բնական իրաւունքները կը ձանձցնեն անոր և միանգամայն կը սովորեցնեն թէ ինքնօրոտութիւն և անդուլ աշխատութիւնը բարեկեցութեան և երջանկութեան միակ ճանրան են: Բարեբաղդաբար, կըսեմք մեք ալ, ազգիս մէջ կրթութեան ու լուսաւորութեան գործն այժմ աւելի յաջող և յուսատու վի-

Եթէ ատոնք են Ամերիկացի Միսիսնարաց աշ-
քի զարնող ծառայութիւններն, այսուհետեւ
չայն անհատք իրենք զիրենք կրթելու և ի-
րենց ընտանիքները ծանախելու և
ինքնօգնութիւն տրուելու համար պէտք չը պի-
տի ունենան այսպիսի օտարականաց, որք
դատարարութիւնն բողին ներքե կրօնական
ծառայման միայն կաշխատին:

(Մատիս)

ԹԵՐԱԴԵՄԱՆԸ ԵՖԲԵԱՐԻ ԳԱՏԸ

Վազրթի փաստարան Պ. ձիւրայիլ Վար-
դուր խիտ ծիծաղելի առարկութիւն մը կը-
նէ, երբ չորեքշաբթի առուր Մանգուսէի
Եփեթարի մէջ մեզ պատասխանել կարծելով
կրէ թէ Մատիս Թէրադէմանի Եփեթարի հը-
րատարակութեանց մասին Վազրթի փաստա-
րանին ըսածը ժխտելով ինքզինք մասնա-
կից կրէ Թէրադէմանի դատին և զայն ամ-
բաստանող ընդհանուր դատախազին դէմ կը
խօսի:

Պ. Կարկուրի այս խօսքը ժամանակաւ ըս-
տորին դատու Թրքաց ոմանց «հաւատարմ»
հայհոյեցող կը յիշեցնէ մեզ. և արդարեւ, ո՞ր
միտմտ ըմբռնել թէ մինչդեռ ընդհանուր
դատախազը Թէրադէմանը Եփեթարի միայն եր-
կու յօդուածներն իւր ձեռքն առած էր,
Վազրթի փաստարանն յանդգնութիւնն ա-
ռած տանելով, հարստահարութեանց ինչպէս
նաև բարենորոգմանց գործին վրա Թէրադէմանը
Եփեթարի մէջ հրատարակելով բոլոր տեղեկու-
թիւններն Վերաձիւն անուամբ մկրտած է:
Արդ, մեզ Պ. Կարկուրի այս անընդունելի
պահանջումն հերքեցինք, և ըսինք որ իւր
այդ «Արաձիւն» բառն անտեղի էր: Ինչ որ
գրած եմք այդ նկատմամբ, կատարելապէս կը
հաստատենք զայն, և աւելի պատասխան մը
տալու հարկ չեմք տեսնել առ այժմ: Մայրաքա-
ղաքի Գաղղիական Սթամպուլ լրագիրն իւր
նախընթաց թիւով հետեւեալ կը հրատարա-
կէ Թէրադէմանը Եփեթարի գործին վրայ. «Բա-
րեբաղը կը համարիմք զմեզ ծանուցանելով
թէ Թէրադէմանը Եփեթար չայ լրագրին տնօրէ-
նն ու արտօնատէրն, որք Հայոց ապստամ-
բական մասնախորհրդի մը գործիքը լինելու
մասին Վազրթի ըրած ամբաստանութեան
վրայ ընդհանուր դատախազին խնդրանք
բանտարկված էին, նախընթաց օրն արձակե-
ցան» շնորհիւ Պատրիարք Ներսէս սրբազանի
կողմանէ առ Բ. Գուրը արուած բացորոշ ա-
պահովութեանց: Ն. Սրբազնութիւնն յիշեալ
լրագրագետաց պարկեշտութեան երաշխաւո-
րեց, և անոնց դէմ իղած անուր ամբաստա-
նութեան ստույթիւնն հաստատեց:

Թէրադէմանը Եփեթար իւր երկուսուն թը-
ւով յաղկել յօդուած մը հրատարակելով, շը-
նորհակալութիւն կը յայտնէ Ամեն. Ներսէս
Սրբազանի՝ այն բարձր և բարեխիղական հո-
գածութեան համար, որով լցուցած է իւ-
շեալ լրագիրը:

Այս առաւօտեան Վազրթ լրագիրը՝ տես-
նելով թէ որսն իւր ձեռքէն կը փախչի, չը
կրնար իւր զայրոյթը զսպել Հայոց Պատրիար-
քին դէմ, և սաստիկ յօդուած մը գրելով,
տեղական գործոց խառնուելու մասին Ն.
Սրբազնութեան իրաւունքը կը ժխտէ և կը-
սէ թէ Թէրադէմանը Եփեթարի դատն եկեղե-
ցական գործ մը չէ և իւր իրաւասութեան
չը վերաբերի:

Վազրթի յօդուածը, զոր Սթամպուլ կը
յիշէ, արդարեւ Հայոց Պատրիարքին դէմ զը-
րուած է, բայց հարկ չեմք տեսնել երկար
պատասխան մը տալ այդպիսի չնչին գրուա-
ծի մը, որոյ ինչ ոգով լամբաղուած լինիլը
գուշակել զիւրին է:

Միայն կը բաւականանամք հաստատելով
թէ մինչդեռ ընդհանուր դատախազը լրա-
գրական յանցանքներ միայն կը վերադեր
Թէրադէմանը Եփեթարի պատասխանատուաց,

Ներսէս Սրբազան ո՛չ թէ այդ լրագրին այս
կամ այն յօդուածը պաշտպանած էր, այլ
ընդհանրապէս ապահովութիւն տուած էր
Բ. Գրան նախարարաց թէ խռովարարներու
մեծ ընկերութիւն մը կ'ենալու և Թէրադէմանը
Եփեթարն ալ անոնց գործիք կամ կեղծուն
նկուռ ամբաստանութիւնն անտեղի էր, և
այսպէս Հայոց Պատրիարքն ո՛չ միայն իւր կա-
տարելով իրաւասութեամբը շարժած էր, իւր-
րեւ ամենէն աւելի տեղեկակ ազգին մէջ ան-
ցած իրողութեանց, այլ և դատարանաց ան-
կախութեան դէմ ոսնձգութիւն չէր ըրած,
(ինչպէս կրէ Թուրք լրագիրը), քանի որ ընդ-
հանուր դատախազն ալ արդէն այդպիսի ամ-
բաստանութիւն մը չէր ընել: Ասկից զատ,
քանի որ ապացուցուած էր թէ Թէրադէմանի
խմբագրականին և արտօնատէրին բանտար-
կութիւնն համաձայն չէր օրինաց, Հայոց
Պատրիարքն այդ բանտարկութեան դէմ բողո-
քած էր, և բանտարկելոց պարկեշտութեան
երաշխաւորած. հետեւաբար, ո՛չ միայն իւր
իրաւեց սահմանէն դուրս չէր ելած, այլ և
արդարաւորական գործ մ'ըրած էր, որ Վա-
զրթի զայրոյթ պատճառելուն հակառակ՝ ոչ
նուազ զովելի է: Իսկ այդ զայրոյթը զիւրու
կը մեկնուի այժմ, քանի որ այսօր աւելի
քան երբեք յոյս կ'այ թէ Թէրադէմանի գործն
արդարութեամբ պիտի կարգադրի, և զոչա-
յոյսիչ լուծման մը յանգի:

(Մատիս)

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 9 փետրվարի

Վազուց է Վաշկինն նամակ չէի գրած, սա-
տիկ զբաղված լինելով: Բացի իմ սովորական պա-
րագրութեանց զբաղված էի այժմ իմ Ուրալեան
ճանապարհորդութեան մասին վերջացած աշխա-
տանքս տպագրելով:

Վերջին ժամանակներս գերմանական լրագրու-
թեան մէջ շատ քիչ է խօսուում հայերի մասին,
այդ պատճառով չտալով եմ ուղարկել Վաշկին
խմբագրութեանը «Köln. Zeitg.» լրագրի այն հա-
մարը, որի մէջ մի թէ և փոքրիկ, բայց նշանաւոր
նկատողութիւն կայ հայերի մասին: Հաւատարմ
եմ որ խմբագրութիւնը ուղարկութիւն կը դարձ-
նի այդ նկատողութեան վրա և կը տպի նրա
խորհրդանշանութիւնը իր էջերի մէջ, Յօդուածի միտ-
քը այն է, որ Բ. Գուրը լաւ կանի եթէ շտապի
հայերին տալ խոստացած ընթերցանք, եթէ ոչ կա-
րող է ու լինել, որովհետեւ չուտով ուրիշ խնդր-
ներ իւր կարող է բարդվել և «Հայոց խնդիրը»
և աւելի էլ զփութարացնել թիւրքաց տէրութեան
դրութիւնը:

Մի քանի խօսք էլ ասեմ այժմ Գերմանիայի
դրութեան մասին: Ամենքը այստեղ իրանց ներքին
հարցերով են զբաղված և ասեմ մի վախ է տրել
ամենքին, ասեմ մի բան է պատրաստուում, բայց
ոչ ոք չէ իմանում ինչ, Ամեն կողմից դրութիւնը
թէ տնտեսական և թէ հասարակական շատ ծանր
է, Գերմանիայի քաղաքական յարաբերութիւնները
ուրիշ մի քանի պետութիւնների հետ լարված են
երևում: Առհասարակ կարծես մի տեսակ տօթ
է տրելու միջոցով, որ մերիկ է նախադրւալուում,
երկրի մէջ զփոխութիւնը աճում է սաստիկ ծանր
հարկերի պատճառով: Սիւնիզիայի մէջ թանգու-
թիւնը որ ցրտերի պատճառով դարձեալ սաստա-
ցել է և ամեն կողմից կարօտանքների համար օգ-
նութեան է զրգուում, այն հետեանքն ունեցաւ, որ
ոչ ոք այլ եւս աշխատել չէ կամում, բայց սպա-
սում է որ կ'օգտիտ է տնէրը օգնութիւն հասցնել,
Տնտեսողները առում են որ այդ նախագի ազգա-
բնակչութիւնը կատարելապէս յուսահատված է:

Այստեղ շատերն զբաղեցնում է զօրքի մեծաց-
նելու առաջարկութիւնը, որ պահանջում է կա-
ռավարութիւնը և ուրիշն զորանով ակամայ մըտ-
ցում է առանց զորան էլ ծանր հարկերին են-
թարկված ժողովրդի մէջ նոր և անտանելի ծախ-
սեր....

Ամեն ուրիշ կողմերից սաստիկ խնայողութիւն
է ցոյց տալիս կառավարութիւնը, իսկ զօրքի
թիւը աւելացնելու համար նոր հարկեր է մտցնում:
Ընդհանուր կարծիք է այստեղ, որ երբ Գերմա-
նիայում զօրքի թիւը աւելացաւ, բոլոր միւս հա-
րեան կառավարութիւններն էլ նմանապէս կը

բաղմանն իրանց զինուորների թիւը, այնպէս որ
երկրիների զօրքերի համեմատական թիւը դարձեալ
նոյն կը մնայ, եւ եթէ այսպէս կը շարունակի
գերմանական կառավարութիւնը՝ հրէշաւոր ծախ-
սեր կը հասցնի ամբողջ երկիրը:

Կղերականները դարձեալ սկսում են յանդուգն
դաւնալ և ծագում են ամեն ուրիշ ձգտումներ,
որոնք դուրս են բուն կղերական ձգտումներից:
Նրանք աշխատում են իրանց կողմը գրաւել կա-
ռավարութիւնը և տիրապետել այլ բոլոր կուսակ-
ցութիւնների վրա: Կուսակցութիւնները առհասա-
րակ միմեանց հետ այնպիսի լարված յարաբերու-
թիւնների մէջ են գտնվում, որ մին միւսի երե-
սին ամենակուրսի հայոյնքներ են զգում....
Ամեն մէկը միւսի ազնւութեան վրա պարզ
կատկածներ է յայտնում և ճշուտ ու զրպար-
տութիւն լաւեցը շատ սովորական և ամենօրեայ
են դարձել պրոտական պատգամաւորների ժողո-
վի մէջ:

Մի խօսքով ընդհանուր դրութիւնը այստեղ
անտանելի է դարձել և երկար ժամանակ այսպէս
մնայ չէ կարող:

Ս. Պետերբուրգի մէջ Կայսրի դէմ գործած վեր-
ջին եղեւնագործութիւնը սարսափ գցեց այստեղ
ամեն չըմաններում և դէպի Նորին Մեծութիւնը
ուղեցած համակրութիւնը ընդհանուր է, ինչպէս
ընդհանուր է և ուրախութիւնը որ Կայսրի կեան-
քը պահպանվեցաւ նախանշանութեան ձեռքով:

Անդրէաս Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Լժնդոնի «Standard» լրագրին Կալկուտայից
հեռագրում են, փետրվարի 18-ից հետեւեալը. «Սո-
տիդիայի փոխաբան առաջարկում է որպէս Եւ-
կուր-խանի յաջորդ Վալի Մօհամմէդին, որը պատ-
րաստ է Հէրաթը տալ Պարսկաստանին, բայց
հրաժարում է զիջանել Ֆրանսիայի ցանկացած բո-
ւոր ցամաքը»:

—Վիէնայի «Presse» լրագիրը հետաքրքրի
մանրամասն է հաղորդում Լորէմէի թագման
մասին, որը, ինչպէս յայտնի է, հրէայ էր: Ֆրան-
սիայի մեծ բարբին Լորէմէի գերեզմանի մօտ աղօ-
թում էր Ֆրանսիայի շուտով միութեան մասին,
Պ. Եւկուրսոնը, իր բաղմաթիւ լսողներ բուռն
ծախախտութիւնների ժամանակ, խօսում էր այն
բանի մասին, որ հրէական ծագումի ֆրանսիացի
երիտասարդները առաջին կարգերում կը կու-
ւեն, երբ կը զարկի կուր ժամը:

—Սանտի ձախակողմը ենթադրում է Լորէմէի
տեղ ընտրել պ. Ալբեր Գրէվիլին, որը այժմ Ալ-
ժիրիայի նահանգապետ է:

—«Temps» լրագիրը հաղորդում է, որ Բերլինի
մէջ լրագիր այսպէս է նկատարում իշխան Բիսմար-
կի իշխանագին առաջարկած միջոցները. հար-
կեր վճարել, զինուոր լինել և լաւ—աճա ինչուի
են կայանում գերմանական քաղաքացու իրաւունք-
ները և պարտաւորութիւնները:

—Ֆրանսիական հանրապետութեան սենատը
նշանակեց փետրվարի 23-ին ցմաւ սենատորի ըն-
տրութիւնը, հանգուցեալ Լժնդ-Լալիւնի տեղ:

—Ներկայ տարւոյ յունվարին Ֆրանսիայում վը-
տած է 335 միլիոն ֆրանկի, ապրանք, իսկ արտա-
գրված է 159 միլիոն ֆրանկի ապրանք, Վաճա-
ռահանութեան այս անհոյգութիւնը «Temps» լը-
րագիրը բացատրում է նրանով, որ երեք անգամ
չոր տարի և ֆիլոսոփ է եղել 1876 թիւ
յունվարին անդադար նիւթեր բերված էին 55
միլիոն ֆրանկի, իսկ այս տարի, մի և նոյն ամսին
146 միլիոնի է բերված:

ԽԱՆԵ ԼՈՒԻՐԵՐ

Ամերիկական «Railway Journal» լրագիրը, որը
իր ընթերցողներին հաղորդում է ներքին և արտա-
քին քաղաքականութեան ճիւղերից զանազան ամե-
նանոր տեղեկութիւններ, բօրային կուրսեր, կոն-
գրէսի մէջ եղած վիճաբանութիւններ և թաւոր-
նական նորութիւններ, և որը ամեն օր է դուրս
գալիս—հրատարակում է Նիւ-Եօրկ և Սան-Ֆրե-
րանցիսկո քաղաքների միջով շրջող գնացքի մէջ,
Բոլոր Լուրերի և տեղեկութիւնների, որոնք ԼԵՑ-
նում են նրա սիւները, հաղորդում են այդ լրա-
գրին հեռագրով Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ
Նահանգների զանազան կետերից, նշանակած կա-

յարանների վրա, որոնց մօտով յայտնի օրը և ժա-
մին զնացքը պէտք է անցնի: Լրագիրը շարվում
է, տպագրվում է և զնացքի մէջ Խոլո ճանապար-
հորդներին բաժանվում է, քանի որ երկաթուղին
այնուամէջ հովիտներով և անտառներով. կտրում
է գետեր և բարձրանում է լեռների վրա: Ամեն
առաւօտ ճանապարհորդը ստանում է այս լրա-
գիրը իր սուրճի հետ միասին, և այդպիսով նա
զիտէ միշտ այն բոլորը, ինչ որ կատարվում
է երկրագնդի վրա, իր եօթ օրվայ ճանա-
պարհորդութեան ամբողջ ընթացքում, որպէս
է 3,990 միլոն տարածութիւն անցնի: Ստորագրողը
լրագրի համար փող մօցնելով Նիւ-Եօրկում, ճա-
նապարհորդական տոմսակի հետ միասին, լրագրի
վերջին համարը արդէն ստանում է Սիէրա-Նեվա-
դայի բարձրութիւնների վրա: 25 կարեկի չը խոս-
տովանել, որ ծովի մակերեսից 10,000 ոտնա-
չափ բարձրութեան վրա լրագրի տպագրութիւնը,
չարժվող տպարանի մէջ, այնպիսի մի նշանաւոր
փաստ է, որ արժանի է յիշելու լրագրութեան
ժամանակագրութեան մէջ և որ պատիւ է բերում
ամերիկական հնարագիտութեան:

Անգլիական լրագրերում հաղորդում են զանա-
զան պետութիւններում և աշխարհի զանազան
մասերում հրատարակվող պարբերական հրատա-
րակութիւնների և լրագրերի ստատիստիկական
թվերը: Գերմանիայում 3.778 պարբերական հրա-
տարակութիւններ և լրագիր եր են հրատարակ-
վում, Աւստրիայում 1,200, Անգլիայում 2,509,
Ֆրանսիայում 2000, Իտալիայում 1226, Ռուսաս-
տանում 500, Եւրոպայում բոլորը 13,600 է հրա-
տարակվում: Ասիայում 388, Աֆրիկայում 50,
Ամերիկայում 9,129, Աւստրալիայում 100: Բոլոր
պարբերական հրատարակութիւնները և լրագրե-
րները աշխարհիս երեսին 23,290 է հաշուում:

Ալէքսանդր Դիւմայի «Ապահարզանի» հարցի
մասին այս օրերս հրատարակած նոր գիրքը մեծ
զդրոց է գցել, նրա մէջ յայտնած մտքերի պատ-
ճառով, որոնք օրվայ հարց են կազմում, Հէնց
հրատարակութեան առաջին առաւօտը 10,000 օ-
րինակ ծախվեցաւ այդ գրքից: Ինչպէս լսվում է
Պոլ Ֆելալ նրա դէմ պատասխան է պատրաս-
տում:

Երնէստ Բրնանը փետրվարի 5, 8, 10 և 15-ին
կը կարգայ դատախօսութիւններ Լժնդոնում «Է.Ն.Օ-
մի» ազդեցութիւնը քրիստոնէութեան զարգացման
վերաբերութեամբ:

Ներկայ տարվայ յունվար ամսին Լժնդոնի հա-
մալսարանում աւարտած ուսանողների թիւում յիշ-
ված են և 29 կանայք:

Միացեալ-Նահանգների «Iowa» նահանգում
պատգամաւորների ժողովը վճռեց վերանորո-
թեան տակ գցել սահմանադրական օրէնքները,
այն պայմանով, որ կանանց եւ իրաւունք տրվի
երկրի ներկայացուցիչներ լինել, որպէս պատգա-
մաւորներ:

ՄԵԱԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 փետրվարի: Այսօր
զինուորական դատարանը դատապարտեց մահ-
վան պատժին, կախաղանի միջոցով, այն յան-
ցարարին, որ փորձ փորձեց կոնս Լօրիս-Մէլի-
քովին սպանելու: Դատաւիճիւր կը կայանայ
վաղ առաւօտեան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 փետրվարի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
94 ռ., երկրորդ 93 ռ., երրորդ 93 ռ. 50 կ.,
չորրորդ 92 ռ. 85 կ., ներքին առաջին 5% փո-
խառութեան տոմսակը արժէ 225 ռ. 75 կ.,
երկրորդ 226 ռ. 25 կ., արեւելեան առաջին
90 ռ. 12 կ., երկրորդ 90 ռ. 12 կ., երրորդ
90 ռ. 12 կ., ոսկի 7 ռ. 78 կ.: Ռուսաց մի
րուբլ Լժնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռու-
սաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ 215
մարկ 75 պէնս, Փարիզի վրա արժէ 266 ֆրանկ:
Բօրային տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ